Շրջակա միջավայրի նախարարության
գլխավոր քարտուղար
պարոն Սերգո Աթանեսյանին

# Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
# ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. ***Քաղաքացիական ծառայողի անունը, ազգանունը.***
   Անի Խաչատուրյան

2. ***Զբաղեցրած պաշտոնը.***
   Միջազգային համագործակցության վարչության գլխավոր մասնագետ

3. ***Գործուղման վայրը և ժամկետները***
   Բելգիայի Թագավորություն, ք. Բրյուսել, 2023 թվականի նոյեմբերի 15-18-ը

4. ***Հրավիրող կողմը***
   ՄԱԿ-ի Զարգացման ծրագիր

5. ***Գործուղման նպատակը***
   Մասնակցություն «ԵՄ կլիմայի համար» տարածաշրջանային ծրագրի պաշտոնական փակման միջոցառմանը և ղեկավար կոմիտեի նիստին:

6. ***Քննարկված թեմաները***

2023 թվականի նոյեմբերի 16-ին կայացած Եվրոպական միության ֆինանսավորմամբ և ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի կողմից իրականացվող «ԵՄ կլիմայի համար» տարածաշրջանային ծրագրի պաշտոնական փակման միջոցառմանը քննարկվել են հետևյալ թեմաները.

- Արևելյան գործընկերության երկրներում կլիմայական հավակնությունների ընդլայնում,
- «ԵՄ կլիմայի համար» տարածաշրջանային ծրագրի արդյունքների ներկայացում. կլիմայական գործողությունների ռազմավարական պլանավորում,

- Իրավական համապատասխանեցում/ներդաշնակեցում ԵՄ օրենսդրության հետ և կարողությունների բարձրացում,
- «ԵՄ կլիմայի համար» տարածաշրջանային ծրագրի շրջանակներում կարողությունների զարգացման գործողությունների ներկայացում,
- Հետագա համագործակցության ընդլայնման կարևորում:

«ԵՄ կլիմայի համար» տարածաշրջանային ծրագրի պաշտոնական փակման միջոցառմանն անմիջապես հաջորդել է ծրագրի ղեկավար կոմիտեի նիստը, որի ընթացքում քննարկված հիմնական թեմաներն են.

- 2019-2023 թվականների ընթացքում ծրագրի արդյունքների ներկայացում,
- Ծրագրի իրականացման ֆինանսական հատվածի ներկայացում,
- 2019-2023 թվականների ընթացքում ծրագրի ներքո իրականացված հանրային միջոցառումների ներկայացում,
- Ծրագրի արդյունքների անկախ գնահատման ներկայացում,
- Եզրակացություններ և Արևելյան գործընկերության երկրների կողմից հետագա քայլերի նախանշում,
- Ղեկավար կոմիտեի որոշման ընդունում և նիստի ամփոփում:

## 7. ***<u>Հանդիպումները, ելույթները.</u>***

Հայկական պատվիրակության կողմից ներկայացվեցին Հայաստանի կլիմայական քաղաքականության շրջանակը, հիմնական ձեռքբերումները, ծրագրի իրականացման ժամանակահատվածի՝ 2019-2023 թվականների համար ոլորտի քաղված դասերը: Ծրագրի շրջանակներում իրականացված աշխատանքների՝ իրենց փորձով կիսվեցին Արևելյան գործընկերության երկրները (Հայաստանի Հանրապետություն, Ադրբեջանի Հանրապետություն, Վրաստան, Մոլդովայի Հանրապետություն և Ուկրաինա): Ներկայացվեցին ծրագրի շրջանակներում իրականացված կլիմայական օրակարգի ազգային օրենսդրության իրավական կարգավորումները և դրանց ներդաշնակեցումը ԵՄ օրենսդրության հետ: Ելույթներում կարևորվեց տարածաշրջանային ծրագրի շրջանակներում կլիմայական օրակարգի ձևավորման և իրականացման իրավական և ինստիտուցիոնալ կարողությունների ամրապնդման նպատակով համագործակցության արդյունավետությունը և վերահաստատվեց պատրաստակամությունը համագործակցել «ԵՄ կլիմայի համար» տարածաշրջանային ծրագրի երկրորդ փուլի ընթացքում:

8. ***Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը***

«ԵՄ կլիմայի համար» տարածաշրջանային ծրագրի պաշտոնական փակման միջոցառման և ղեկավար կոմիտեի նիստի ընթացքում կարևոր նշանակություն տրվեց ոլորտային համագործակցության արդյունավետությանը տարածաշրջանային ծրագրերի և նախաձեռնությունների շրջանակներում, ինչպես նաև հանդիպման ընթացքում ընդգծվեց գործընկերության/համագործակցության ընդլայնման անհրաժեշտության մասին:

9. ***Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները***

Հանդիպման ընթացքում առանձնահատուկ կարևորվեց միջազգային համագործակցության շրջանակների ընդլայնումը, մասնավորապես, Եվրոպական հանձնաժողովի և ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրերի: Ընդգծվեց Արևելյան գործընկերության երկրներին կլիմայական օրակարգի իրականացման համար տրամադրվող ֆինանսական աջակցության կարևորությունը:

Գործուղվող

Ա. Խաչատուրյան

22.11.2023 թ.